ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼԱԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ ԷԴԻԿԻ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԺԲ.00.02 «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական, իրավունք պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ И ПРАВА НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУКА РА

ШАХНАЗАРЯН НОРИК ЭДИКОВИЧ

СОВРЕМЕННЫЕ КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ, ЮРИДИЧЕСКИЕ СВОЙСТВА И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ КОНСТИТУЦИИ РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право-конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление

ЕРЕВАН – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հովհաննես Միքայելի Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Մարտին Անդրանիկի Մանուկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Մ.Մաշտոցի անվ. համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի նոյեմբերի 18-ին ժ. 16^{30}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թվականի հոկտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утвервждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Сафарян Гарник Грачикович**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Степанян Ованнес Микаелович**

Кандидат юридических наук **Манукян Мартин Андраникович**

Ведущая организация**:** **Университет им. М.Маштоца**

Защита состоится 18 ноября 2024 г. в 16^{30} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции Комитета по высшему образованию и науке РА, действующего вРоссийско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 17 октября 2024 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից գիտական հետազոտություններում ընդգծվում է հիմնավորված հետաքրքրությունը սահմանադրության հիմնահարցի նկատմամբ: Սահմանադրությունը դառնում է անհրաժեշտ նախապայման՝ իրավունքի գերակայության հաստատման գործընթացում: Սահմանադրության ուսմունքը որպես համակարգված հայեցակարգ ձևավորվեց բուրժուադեմակրատական հեղափոխությունների դարաշրջանում (XVII-XVIIIդդ):

Արդի ժամանակաշրջանի սահմանադրությանը բնութագրական է ազգային իրավական համակարգում սահմանադրության գերակայության հիմնարար սկզբունի հաստատումը:

Սահմանադրական զարգացումների ամենաընդհանրական բնութագրիչն այն է, որ ներկայումս, առավել քան երբևէ, կարևորվում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի գործադրման հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական համակարգերի և սկզբունքների կայացման նախադրյալ:

Այդ ելակետային սկզբունքը հատկապես կարևորվում է արդի դարաշրջանում կազմավորված նորանկախ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համար: ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեի միջոցով, հետագայում՝ 2005 և 2015 թվականներին դարձյալ հանրաքվեի միջոցով կատարվել են էական և խմբագրական փոփոխություններ: Սակայն այդ փոփոխությունները կրել են հիմնականում հատվածային և ոչ համակարգված մեթոդաբանական բնույթ, արդյունքում մնացել են բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության, իշխանությունների բաժանման, դատական համակարգի կատարելագործման, տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման ոլորտներում:

Ինչ խոսք, բոլոր ժամանակներում չի եղել և չի էլ կարող լինել բացարձակ անթերի ու կատարյալ սահմանադրություն կամ օրենք: Դա բացատրվում է ոչ միայն սուբյեկտիվ պատճառներով (սահմանադրությունը որոշակի քաղաքական ուժերի պայքարի փոխզիջման արդյունք է, որտեղ իր կնիքն է դնում նաև սահմանադիրների իրավագիտակցության և իրավական մշակույթի մակարդակը և այլն), այլև օբյեկտիվ գործոններով (հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, ժամանակի մարտահրավերները և այլն):

2015թ. վերափոխված Սահմանադրությունն առավել հստակեցրեց իշխանությունների տարանջատման սկզբունքը որոշակիորեն, ամրապնդեց մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխիքների համակարգը, բարեփոխեց դատական մարմինների համակարգը, մասնավորապես՝ լրացուցիչ երաշխիքներ սահմանվեցին դատական անկախ իշխանության կայացման և դատական ակտերի հեղինակության բարձրացման ուղղությամբ, ընդլայնեց տեղական ինքնակառավարման համակարգի իրավասությունը և այլն: Սակայն դրանով չսահմանափակվեց սահմանադրական բարեփոխումների օբյեկտիվ գործընթացը որոշակիորեն: Դեռ ավելին, 2015 թվականի փոփոխություններից տարիներ անց բացահայտվեց, որ գործող Սահմանադրությունն ունի հետագա համակարգային փոփոխությունների կարիք:

Ուստի սահմանադրական տեսական և գործնական բնույթի մի շարք հարցադրումներ կարիք ունեն լուրջ գիտական հետազոտությունների, որին էլ նվիրված է սույն ատենախոսական ուսումնասիրությունը: Այս առումով սահմանադրական տեսությունն անելիքներ շատ ունի, այդ թվում՝ վերջին տարիների հայ սահմանադրական իրավունքի զարգացման գիտական համակողմանի հետազոտության բնագավառում, որին ձեռնամուխ է եղել խնդրո ատենախոսության հեղինակը:

Վերոնշվածով է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրությունը և դրա հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Չնայած հիմնահարցի ուսումնասիրության հրատապությանը հայրենական իրավագիտության մեջ այն դեռևս համալիր և համակողմանի հետազոտության առարկա չի դարձել:

Սահմանադրության վերաբերյալ հիմնահարցերը այս կամ այն չափով շոշափվել են հայրենական հայտնի գիտնական-իրավաբանների, մասնավորապես՝ Վ.Ռ. Նազարյանի, Ն.Ա. Այվազյանի, Հ.Մ.Խաչատրյանի, Գ.Գ.Հարությունյանի, Գ.Բ.Դանիելյանի, Ա.Գ. Վաղարշյանի և այլոց աշխատություններում:

Խնդրո հիմնահարցն առավել ամբողջությամբ լուսաբանվել է սահմանադրական իրավունքի ռուսական դպրոցի, մասնավորապես՝ Ս.Ա. Ավագյանի, Մ.Բագլայի, Վ.Լուչինի, Բ. Տոպորնինի, Յու. Ա. Տիխոմիրովի, Դ.Կովաչևի, Վ. Չիրկինի, Ա. Միշկինի, Բ.Ստրաշունի և այլոց աշխատություններում:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված հայրենական և ռուս գիտնականների անուրանալի ներդրումը սահմանադրության և սահմանադրականության գիտական ուսումնասիրման ոլորտում, այդուհանդերձ գտնում ենք, որ քննարկվող հիմնախնդիրները ներկայումս կարիք ունեն համալիր ու համակողմանի գիտական հետազոտության, հատկապես մեզանում իրականացվող սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Հետազոտության օբյեկտն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության էությունն ու բովանդակությունը:

Հետազոտության առարկան է՝ ժամանակակից սահմանադրության հասկացությունը, առանձնահատկությունները և զարգացման միտումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության զարգացման հիմնական ուղենիշները և արդի մարտահրավերները՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակն է համալիր և բազմակողմանի վերլուծության ենթարկել սահմանադրության, որպես երկրի հիմնական օրենքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները:

Խնդրո նպատակը կանխորոշել է հետևյալ խնդիրների առաջադրումը և դրանց լուծման ուղիները.

բացահայտել սահմանադրության հասկացությունը, էությունը և բովանդակային առանձնահատկությունները,

վերլուծել ՀՀ սահմանադրական զարգացման հիմնական միտումները,

բացահայտել սահմանադրության անմիջական գործադրման տեսական և կիրառական նշանակությունը իրավակարգավորումների ոլորտում,

վերաիմաստավորել սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը ազգային իրավական համակարգի զարգացման խնդրում:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է նրանում, որ հեղինակը համակողմանի և համակարգված քննական վերլուծության է ենթարկել ՀՀ սահմանադրական զարգացման հիմնական փուլերը, հիմնավորելով գործող սահմանադրության համակարգված փոփոխությունների անհրաժեշտությունը՝ պայմանավորված երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և իրավական գործոններով, ինչպես նաև աշխատանքում բացահայտվում է սահմանադրության՝ որպես հասարակական դաշինքի (պայմանագրի) իրավաքաղաքական և գաղափարական էությունը:

Աշխատանքում քննարկվել են նաև արդի սահմանադրական արժեբանական և հայեցակարգային մոտեցումները, սահմանադրության դրույթների անմիջական գործողության և իրավական համակարգի կատարելագործման, սահմանադրության մեկնության, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման հարցերը:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում, գործնական առաջարկություններում և տեսական հետևություններում, որոնք ունեն ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. Սահմանադրությունը հասարակության հիմնարար իրավական անկյունաքարն է, որի վրա կառուցվում են ողջ իրավական համակարգը և իրավահարաբերությունները: Սահմանադրությունը նաև հասարակական, քաղաքական և իրավական փաստաթուղթ է, այն կենդանի և անմիջական գործող իրավունք է իրավական կարգավորման բոլոր ոլորտներում:

2. ՀՀ Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժով օժտված մեկ միասնական ամբողջական նորմատիվ իրավական ակտ է, որը հայ ժողովրդի

(ազգի) կամքին համապատասխան կարգավորում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ծավալվող ամենից էական, արմատական, վճռորոշ հարաբերությունները, այն պաշտոնապես հռչակում և իրավաբանորեն ամրագրում է մարդուն և ժողովրդին պատկանող բնական և անօտարելի իրավունքները և ազատությունները, ինչպես նաև հիմնադրում է դրանց իրացման (կենսագործման) իրավական կառուցակարգերը:

Սահմանադրությունը որպես հասարակության համակեցության կանոնակարգման հիմնարար նորմատիվ իրավական փաստաթուղթ, երաշխիքն է երկրի կայուն և դինամիկ զարգացումն ու տարածքային ամբողջականությունն իրավական առումով ապահովելու համար:

3. Սահմանադրության կարևոր առանձնահատկություններից է դրա յուրա-հատուկ կարգավորման առարկան, այսինքն՝ հասարակական հարաբերությունների այն հատուկ բնագավառները, որոնք պահանջում են սահմանադրական կարգավորում: Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, որոնք կյանքի են կոչվում կարգավորելու որևէ կոնկրետ բնագավառ կամ որոշակի խումբ հասարակական հարաբերություններ, սահմանադրությունն ունի կարգավորման համապարփակ բնույթ, բայց միևնույն ժամանակ խիստ ընդգրկուն բովանդակություն: Այն ընդգրկում է անձի իրավական վիճակը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը, դատական իշխանության կազմակերպման սկզբունքները, ինչպես նաև սահմանադրության փոփոխման կարգը և անցումային դրույթները: Սահմանադրության ուժով իրավունքի (օրենքի) գերակայությունը դառնում է ինքնավար անձի սոցիալական վարքագծի, պետական իշխանության համակարգի իրավաչափ գործունեության և վերջին հաշվով՝ ողջ հանրության վարքագծի կանոնակարգման հենքը:

4. ՀՀ Սահմանադրությունն իրավաբանական հավաստագիր է հայոց պետականության առկայության և զարգացման մասին, հայ ժողովրդի պաշտոնական անձնագիրը՝ երկրի ներսում և արտաքին հարաբերություններում:

5. ՀՀ հասարակության նորմատիվ իրավական հիմքերի առկայությունն արտահայտում է, ամենից առաջ, պաշտոնական սահմանադրության ընդունմամբ՝ ներառելով սահմանադրական իրավական ինստիտուտների հանրագումարը: Սահմանադրական իրավական ինստիտուտները կարող են ստեղծել ՀՀ-ում ժողովրդավարական հասարակություն, եթե արտահայտում են մարդու բնական իրավունքներն ու ազատությունները և դրանց իրականացման իրական

կառուցակարգերը, ամրագրում են իրավական օրենսդրության համակարգը, հանրային իշխանության կազմակերպման իրավական սկզբունքները (իրավունքի գերակայությունը, իշխանությունների տարանջատումը, տեղական ինքնակառավարման հիմունքները և այլն), քաղաքական բազմակարծությունը և բազմակուսակցության սկզբունքը և այլն:

6. ՀՀ Սահմանադրության դրույթների անմիջական գործողության բուն իրավաբանական առումն արտահայտվում է նրա կարգավորիչ գործառույթներում: Կարգավորիչ գործառույթները բացահայտում են ՀՀ Սահմանադրության իրավաբանական հնարավորությունները, ցույց են տալիս, թե ինչպես է արտահայտվում նրա առանձնահատուկ նշանակությունը հասարակական հարաբերությունների իրավակարգավորումների ոլորտում: Կարգավորիչ գործառույթներն արտահայտում են հասարակական հարաբերությունների վրա ՀՀ Սահմանադրության իրավական ազդեցության հիմնական ուղղությունները: Այդ ազդեցությունը նպատակ ունի ապահովել դրանց օպտիմալ գործառնությանը համապատասխան շրջանակներ՝ դրանք որպես անձեռնմխելի և պետության կողմից պաշտպանվող իրավական ամրագրման ճանապարհով, ինչպես նաև հասարակական հարաբերությունների հարաշարժությունը (դինամիկան) ապահովելու, դրանց փոփոխմանն ու զարգացմանն աջակցելու և խթանելու ճանապարհով:

7. ՀՀ Սահմանադրության դրույթների ազդեցությունը իրավական համակարգի զարգացման վրա պետք է պայմանավորված լինի դրանց ազգային արժեհամակարգի և համամարդկային արժեքների փոխլրացնող բովանդակությամբ, որն արտահայտվում է նրանում, որ սահմանադրությունը պետք է նպաստի իրավական համակարգի միասնականությանը, որի շրջանակներում ծավալվում են իրավունքի ճյուղերի ինտեգրման և տարանջատման գործընթացները: ՀՀ Սահմանադրությունը որպես իրավական համակարգվածության գլխավոր կրող, ընդհանրացված ձևով մարմնավորում է ազգային իրավական համակարգի կայունությունը և արդյունավետ գործողությունը:

8. Սահմանադրությունն ամրագրելով մարդու և քաղաքացու իրավունքների պաշտոնական ճանաչումը և երաշխավորումը՝ կանխորոշում է օրենսդրորեն դրա նյութականացման գործընթացը, պատշաճ իրավակիրառ ապահովումը և երաշխավորված պաշտպանությունը:

9. Սահմանադրության հիմնական պահանջն է մարդու իրավունքների գերակայության և անմիջական գործողության ապահովումը, իսկ եթե չկան այդ պահանջի կառուցակարգերը, ապա սահմանադրությունը «սահման կդնի» ոչ թե պետական իշխանության, այլ մարդկանց իրավունքների ու ազատությունների, իշխանությունների բաժանման և իրավունքի գերակայության վրա, ինչպես դա գոյություն ունի ավտորիտար և տոտալիտար քաղաքական համակարգերում:

Հետազոտության մեթոդաբանության հիմունքները: Արդի հասարակագիտությանը և մասնավորապես իրավագիտությանը բնորոշ է հրաժարումը սոցիալական և իրավական երևույթների նկատմամբ միակողմանի, սուբյեկտիվ մոտեցումներից, բազմակարծությունը, օբյեկտիվությունը, պատմականությունը, գիտական և անաչառ վերլուծությունը որպես մեթոդաբանության ելակետային հիմունքներ ընդունելը: Այս առումով ատենախոսության հիմնահարցերի համալիր քննարկումն ինքնին ենթադրում է փիլիսոփայական աշխարհայացքային ընդհանուր մեթոդների կիրառում, որոնց թվին են պատկանում՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, դիտարկումն ու էքսպերիմենտը (փորձարարությունը), համեմատությունը, վերլուծությունն ու համադրությունը, ինդուկցիան և դեդուկցիան:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են համեմատական-իրավաբանական, ձևական-իրավաբանական, համակարգային-կառուցվածքային և նկարագրական վերլուծության մասնավոր մեթոդները:

Հետազոտության տեսական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ հեղինակը նոր հայեցակարգային դիրքերից է բնութագրում ՀՀ Սահմանադրության էությունն ու էական հատկանիշները, որոնք որոշակիորեն զարգացնում են տեսական պատկերացումներն ընդհանրապես սահմանադրության վերաբերյալ և դրանք կարող են հիմք հանդիսանալ հետագա մշակումների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված դրույթները, հետևությունները և առաջարկությունները, կարող են օգտագործվել սահմանադրական փոփոխությունների և ուսումնառության գործընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ անցկացվել է դրա քննարկումը և գրախոսությունը:

Աշխատանքի առավել կարևոր դրույթներն իրենց արատացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը: Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից, սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Ներածության մեջ հիմնավորվորված է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության մեթոդաբանական, տեսական, իրավական հիմունքները, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության տեսագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Ժամանակակից սահմանադրությունների ընդհանուր հայեցակարգային տեսանկյունները»** վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «**Սահմանադրության ժամանակակից ընկալումները»** վերտառությամբ, հանգամանորեն բացահայտվում են սահմանադրության վերաբերյալ արդի հայեցակարգային մոտեցումները:

Ժամանակակից սահմանադրությունները բնութագրվում են ձևերի և բովանդակության հսկայական բազմազանությամբ: Իրավաբանական առումով՝ սահմանադրությունը պետության հիմնական իրավական փաստաթուղթ է, որը սահմանում է հասարակության բնականոն կենսագործունեության իրավական հիմքերը և սկզբունքները, անձի իրավական դրությունը՝ դրա փաստացի իրագործման համար կառուցակարգերը և երաշխավորված պաշտպանության համակարգը:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Սահմանադրությունը որպես իրավական քաղաքական և գաղափարական հիմնարար փաստաթուղթ»** վերտառությամբ, բացահայտվում է ժամանակակից սահմանադրության իրավաքաղաքական և գաղափարափիլիսոփայական բովանդակության էական

հատկանիշները և դրանց անքակտելի փոխկապվածությունը և միասնական ուղղվածությունը:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում «**Ժամանակակից սահմանադրության բովանդակությունը արժեբանական տեսանկյունից**» վերտառությամբ ենթագլխում, հեղինակը արժևորում է երկրի հիմնական օրենքն արժեբանական տեսանկյունից, այսինքն՝ սահմանադրության սոցիալական նշանակությունը, նրա դերն ու նշանակությունը մարդու և քաղաքացու իրավունքների երաշխավորված պաշտպանության և հասարակության բնականոն գործառնության ապահովման գործում:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «**ՀՀ սահմանադրության հիմնական իրավաբանական հատկանիշները**» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում «**ՀՀ սահմանադրության հիմնական և իրավաբանական հատկանիշները**» վերտառությամբ, բացահայտվում են սահմանադրության հիմնական, ելակետային և իրավաբանական հատկանիշները, որոնք ըստ հեղինակի հետևյալներն են. Սահմանադրության **իրական** լինելը (ինչը ենթադրում է, որ սահմանադրության բովանդակությունը և առանձին դրույթներն իրենց էությամբ պետք է համապատասխանեն և համարժեք լինեն հասարակական պահանջներին), սահմանադրության **կայունությունը** (որով պայմանավորված լինի հասարակության կայունությունը), սահմանադրական նորմերի **գերակայությունը** և **անմիջական գործողությունը**: Դրանով հանդերձ, սահմանադրությունը հասարակության ողջ իրավական համակարգի և իրավական պրակտիկայի ատաղձն է:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում «**ՀՀ սահմանադրության գերակայությունը**» վերնագրով հանգամանորեն վերլուծության է ենթարկվում սահմանադրության գերակայության բովանդակային առանձնահատկությունները:

Իրավական և ժողովրդավարական պետություններում անվերապահորեն գործում է երկրի հիմնական օրենքի գերակայության սկզբունքը և՛ օրենսդրության համակարգում և՛ իրավակիրառ պրակտիկայում:

Աշխատանքում հիմնավորվում է ՀՀ սահմանադրության գերակայության ապահովման հետևյալ կանխադրույթները.

1) սահմանադրությունը որպես հիմնադիր բնույթի իրավաքաղաքական ակտ,

2) սահմանադրությունը որպես պետական և հասարակական կարգի հիմունքների իրավական ամրագրման ձև,

3) սահմանադրությունը որպես պետահրավական վարչակարգի հիմք,

4) սահմանադրությունը որպես վերօրենսդրական անմիջական գործող ակտ,

5) սահմանադրությունը որպես հասարակության կայունության և սոցիալական առաջընթացի իրավական երաշխիք:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«ՀՀ սահմանադրության անմիջական գործադրման հիմնախնդիրը»** վերտառությամբ ենթագլխում, բացահայտվում է սահմանադրության անմիջական գործողության կառուցակարգը իրավակարգավորումների ոլորտում:

ՀՀ սահմանադրության անմիջական գործադրման հիմնախնդիրը բարդ իրավաբանական կառուցակարգ է, որի հիմնական ուղղվածությունը հասարակական հարաբերությունների անմիջական համարժեք իրավական կարգավորումն է:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«ՀՀ սահմանադրության զարգացման հեռանկարը դատահրավական բարեփոխումների համատեքստում»** բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«ՀՀ սահմանադրական բարեփոխումների հիմնական ուղղությունները»** վերնագրով հեղինակը ուրվագծում է ՀՀ սահմանադրության զարգացման հիմնական ուղղությունները. կրճատել գործող Սահմանադրության դեկլարատիվ, թղթային նորմերը, որոնք, ըստ էության, չեն գործում (օրինակ՝ ՀՀ սահմանադրության երրորդ գլուխն ամբողջությամբ), սահմանադրության այն նորմերը, որոնք կրկնվում են (սահմանադրական կարգի 3-րդ, 10-րդ, 11-րդ, 16-րդ հոդվածները և Երկրորդ գլխի՝ 23-րդ, 31-րդ, 59-րդ և այլն) հստակեցնել իշխանության աղբյուրի էությունն ու բովանդակությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, հստակեցնել խորհրդարանի, կառավարության և ՀՀ նախագահի իշխանական փոխհարաբերությունների բնույթը, բարձրացնել դատական իշխանության հեղինակությունը և ամրագրել դատական իշխանության անկախության երաշխիքները, ամրապնդել տեղական ինքնակառավարման մարմինների գործառնական լիազորությունները՝ իրենց բացառիկ տնօրինության ոլորտում:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում «**ՀՀ սահմանադրական բարեփոխումների հեղինակային հայեցակարգային մոտեցումները»** վերնագրով,

հանգամանորեն քննարկվում են ՀՀ սահմանադրական զարգացումների հիմնական փուլերը (2005 և 2015թթ. փոփոխությունները), դրանց դրական կողմերը և բացթողումները, սուբյեկտիվիզմը և այլն: Ըստ հեղինակի՝ անհրաժեշտ է համակարգված հայեցակարգային մոտեցում ցուցաբերել նոր սահմանադրության նախագծի մշակման գործում:Դրա համար անհրաժեշտ է ձևավորել Սահմանադիր ժողով, որը կմշակի նոր Սահմանադրության նախագիծը և այն կդրվի հասարակական լայն քննարկման: Քննարկման արդյունքների հիման վրա ըստ հեղինակի ՀՀ Ազգային ժողովն իր որոշումով այն կդնի հանրաքվեի: Թող ժողովուրդը որոշի նոր սահմանադրության ընդունման ճակատագիրը: Ձայն Աստծո, Ձայն ժողովրդի:

Եզրակացություն

1. Սահմանադրությունը որպես պատմական, քաղաքական և իրավական հիմնարար փաստաթուղթ ուղղված էր ավատական միահեծան պետական կարգի և աստիճանավորված հասարակական կառուցվածքի դեմ: Սահմանադրությունը եկավ հաստատելու և իրավաբանորեն ամրագրելու մարդու բնական ու անօտարելի իրավունքները, ինչպես նաև դրանց պաշտպանությանը և իրականացմանն ուղղված համարժեք պետաիրավական կառուցակարգի ստեղծումը:

2. Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավաքաղաքական փաստաթուղթ է, յուրահատուկ հասարակական դաշինք՝ կառավարողների և կառավարվողների միջև, որն ընդունվում և փոփոխվում է հատուկ կարգով (դա կոչված է ապահովել սահմանադրության կայունությունը և դրանով իսկ գոյություն ունեցող հասարակարգը) և կարգավորում է առավել նշանակալի հասարակական հարաբերությունները: Այս ձևակերպման առաջին երեք բաղադրամասերը սկզբունքային փոփոխությունների չեն ենթարկվել (սահմանադրական զարգացման տեսությունն ու պրակտիկան դրանց ավելացրել են միայն որոշ նովելներ): Իսկ ինչ վերաբերում է բովանդակային կողմին, ապա 20-րդ դարի երկրորդ կեսից (երկրորդ համաշխարհային պատերազմից հետո) այն էական փոփոխություններ է կրել:

3. Սահմանադրության կարևոր առանձնահատկություններից է նրա յուրահատուկ կարգավորման առարկան, այսինքն՝ հասարակական հարաբերությունների այն առանձնահատուկ բնագավառները, որոնք պահանջում են

սահմանադրական կարգավորում: Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, որոնք կյանքի են կոչվում կարգավորելու որևէ, կոնկրետ բնագավառ կամ որոշակի խումբ հասարակական հարաբերություններ, սահմանադրությունն ունի կարգավորման համապարփակ բնույթ: Այն ընդգրկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլն, ընդ որում, կարգավորելով այդ ոլորտների առավել կարևոր, հիմնային, առանցքային նշանակության հասարակական հարաբերությունները: Այդպիսիք են՝ սեփականության ձևերն ու բովանդակությունը, անհատի և պետության փոխհարաբերությունների բնույթը, պետական իշխանության աղբյուրը և իրացման ձևերն ու մեխանիզմները, պետության և քաղաքական կուսակցությունների տեղն ու հարաբերակցությունը քաղաքական համակարգում և այլն:

4. Բարձրագույն իրավաբանական ուժը (իրավազորությունը) նշանակում է, որ մնացյալ բոլոր իրավական ակտերը պետք է համապատասխանեն սահմանադրությանը, հակառակ դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ կարող են ճանաչվել հակասահմանադրական:

Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը օրենքների և այլ ակտերի համեմատությամբ հատուկ բարդեցված կարգով կոչված է ապահովել սահմանադրության կայունության և բոլոր հանգամանքների մանրակրկիտ հաշվառումը: Սահմանադրությունը պետք է երաշխավորի հաստատված իրավակարգի կայունությունը և միաժամանակ պետք է թույլատրի իր տեքստում անհրաժեշտ փոփոխությունների ներածումը: Դրա բարդեցված կարգը ապահովում է փոփոխությունների հիմնավորվածությունը:

5. Ժամանակակից սահմանադրությունները սահմանում են կուսակցությունների, այլ հասարակական միավորումների դերը հասարակության մեջ, պարունակում պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի վերաբերյալ դրույթներ: Որոշ սահմանադրություններ (սովորաբար նախաբաններում) տեղեկացնում են երկրի քաղաքական զարգացման ուղղության վերաբերյալ, ամրագրում դրա քաղաքական կողմնորոշումը (երբեմն՝ սոցիալիզմի ուղղությամբ, չնայած վերջինս յուրօրինակ կերպով է ընկալվում):

6. Մեր տեսանկյամբ ցանկացած սահմանադրության հիմնարար սկզբունքների շարքին դասվում են հիմնադիր, սահմանադրական օրինականության, իրավաբանական հիմքի (օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի, իրավագիտակցության զարգացման համար իրավաբանական հիմքի գործառույթ),

կազմակերպչական, կայունացնող և ծրագրային հատկությունները: Այս գործառույթները հստակորեն նկատելի են XXI դարի սահմանադրությունների մեջ, տարանջատված չլինելով «չինական պատով», իրական կյանքում դրանք հատվում են:

7. Սահմանադրությունը ծրագրային փաստաթուղթ չէ, այն իրավաբանորեն ամրագրում է առկա հասարակական-քաղաքական առավել էական հարաբերությունները, որոնք ունեն նաև առաջընթացի նշանակություն:

Միաժամանակ ոչ բոլոր հասարակական հարաբերությունները, որոնք վերջինումս ամրագրված են, վերածվել են իրականության կամ զարգացել լիարժեքորեն: Այդ պատճառով այն արտացոլում է ոչ միայն իրականությունը, այլ նաև այն, թե ինչպիսին պետք է լինեն հասարակական հարաբերությունները, դրանց նմուշները, այսինքն նշում են զարգացման հեռանկարները, դրա հետագիծը: Այս առումով, սահմանադրությունը որոշակիորեն կանխորոշում է տվյալ երկրի իրավակարգի և օրենսդրության զարգացման հիմնական ուղղությունները:

8. Սահմանադրության ազդեցությունը իրավական համակարգի զարգացման վրա կայանում է նրանում, որ Սահմանադրությունը նպաստում է իրավական համակարգի միասնականությանը, որի շրջանակներում ծավալվում են իրավունքի ճյուղերի ինտեգրման և տարանջատման գործընթացները: Սահմանադրությունը խթանում է այդ գործընթացները և միաժամանակ օպտիմալացնում է դրանց հարաբերակցությունը: Այն հանդես է գալիս որպես համակարգվածության կրող, նրանում ընդհանրացված ձևով մարմնավորված են իրավական համակարգի հիմնական հատկություններն ու հատկանիշները:

9. Սահմանադրությանը ոչ միայն հիմնարար նորմերի, այլ նաև ելակետային գաղափարների ու սկզբունքների համակցություն դիտելն՝ այն դարձնում է բարձրագույն իրավաբանական բովանդակություն ունեցող համապետական ակտ, որը հիմնական օրենքին ներարկում է ազգային իրավունքի փիլիսոփայություն, քաղաքացիական իրավագիտակցություն և հասարակական իրավական կացութաձև ձևավորող նշանակություն:

10. Սահմանադրությունը որպես տվյալ հասարակության հիմնարար իրավաքաղաքական փաստաթուղթ՝ ընդունվում է երկարատև և անորոշ ժամանակի համար, քանի որ այն կոչված է կարգավորելու հիմնարար բնույթի հասարակական հարաբերություններ: Այդուհանդերձ ժամանակը թելադրում է իր պահանջները և այս առումով սահմանադրական դրույթները նույնպես ենթակա են որոշակի

փոփոխությունների և խմբագրությունների: Սակայն դրանք պետք է գիտականորեն հիմնավորված լինեն և տրամաբանորեն փաստարկված՝ ելնելով հասարակության զարգացման օրինաչափություններից և օբյեկտիվ պահանջմունքներից:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հրապարակումներում.

1. **Շահնազարյան Ն. Է.,** ՀՀ Սահմանադրության արդի հայեցակարգային մոտեցումները և զարգացման հեռանկարները, Ստեփանյան Պրինտ, Եր., 2024, 142 էջ,
2. **Շահնազարյան Ն. Է.,** Ժամանակակից սահմանադրության ձևերը, Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2022, հմ. 129, էջ 84-87,
3. **Շահնազարյան Ն. Է.,** Ժամանակակից սահմանադրությունների զարգացման միտումները, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, Երևան, 2022, հմ.1(7), էջ 35-42,
4. **Շահնազարյան Ն. Է.,** Ժամանակակից սահմանադրության հասկացությունը և առանձնահատկությունները, Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2022, հմ. 130, էջ 46-52,
5. **Շահնազարյան Ն. Է.,** Սահմանադրական մոդելների զարգացման միտումները, Եվրոպական համալսարան: Գիտ. Հոդվածների ժող./ՀԵՀ Գլխ. խմբ.՝ Հ.Բիշարյան - Եր.: «ՀԵՀ» հրատ., 2022: Գիրք 13(02), էջ 159-166,
6. **Շահնազարյան Ն. Է., Սաֆարյան Գ.Հ.,** Սահմանադրական դրույթների նորմատիվության հիմնախնդիրը, Եվրոպական համալսարան: Գիտ. Հոդվածների ժող./ՀԵՀ Գլխ. խմբ.՝ Հ.Բիշարյան - Եր.: «ՀԵՀ» հրատ., 2022: Գիրք 13(02), էջ 109-117,
7. **Shahnazaryan N.,** The methods of constitutional regulation, «Orenki Patvar» scientific medhodical journal of the Police Educational Complex, № 14, Yerevan, 2022, p. 197-204,

8. Շահնազարյան Ն. Է., Սահմանադրության կառուցվածքը, Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, 2022, հմ. 132, էջ 48-52,

9. Շահնազարյան Ն. Է., Սահմանադրական կարգավորման օբյեկտը, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, Գավառ, 2022, հմ. 13, էջ 562-572,

10. Շահնազարյան Ն. Է., Սահմանադրությունը և հերմենևտիկան՝ տեսական և կիրառական հարցերի միջոցով, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ 2, Հասարակական գիտություններ, Ստեփանակերտ, 2022, էջ 261-273,

11. Շահնազարյան Ն. Է., Սահմանադրական արժեքանության հասկացությունը, ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր 1(109)2023, էջ 140-151,

12. Շահնազարյան Ն. Է., Սահամանադրությունը և սահմանադրականությունը, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, Գավառ, 2023, հմ. 15, էջ 543-555,

13. Շահնազարյան Ն. Է., Ժամանակակից սահմանադրությունների նախապատրաստման, ընդունման և փոփոխման եղանակները, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, Երևան, 2023, հմ. 1(9), էջ 69-76:

РЕЗЮМЕ

Шахназарян Норик Эдикович

Современные концептуальные подходы, юридические свойства и тенденции развития Конституции РА

В современных научных исследованиях подчеркивается обоснованный интерес к вопросу Конституции. Конституция становится необходимым предусловием в процессе установления верховенства права. Учение о Конституции как систематизированная концепция сформировалось в эпоху буржуазно – демократических революций (XVII-XVIII вв.).

Для конституции современного периода характерно утверждение основополагающего принципа верховенства Конституции в национальной правовой системе.

Наиболее общей характеристикой конституционных развитий является то, что в настоящее время, как никогда ранее, придается важность надежной гарантии применения конституционных принципов и норм в общественных отношениях, конституционализации этих отношений как предпосылки для становления правовых, демократических систем и принципов.

Этот исходный принцип особенно важен для правовой системы новых независимых государств, сформировавшихся в современную эпоху, в том числе Республики Армения. У нас конституционные изменения носили в основном фрагментарный и несистематизированный методологический характер, в результате чего осталось множество нерешенных проблем в направлении эффективной защиты прав человека, разделения властей, совершенствования судебной системы.

Разумеется, абсолютно безупречной и совершенной конституции или закона во все времена не было и не может быть. Это объясняется не только субъективными причинами (Конституция является результатом компромисса в борьбе определенных политических сил, где также накладывает свою печать на уровень правосознания и правовой культуры конституционалистов и т. д.), но и объективными факторами (объективные закономерности общественного развития, вызовы времени и т. д.).

Измененная в 2015 году Конституция более четко определила принцип разделения властей, укрепила систему гарантий прав и свобод человека и гражданина, реформировала систему судебных органов, в частности, были установлены дополнительные гарантии для установления независимой судебной

власти и повышения авторитета судебных актов, расширила компетенцию системы местного самоуправления и т.д. Однако этим процесс конституционных реформ не ограничился. Более того, спустя годы после изменений 2015 года выяснилось, что действующая Конституция нуждается в дальнейших системных изменениях.

Следовательно, ряд вопросов конституционно-теоретического и практического характера нуждаются в серьезном научном исследовании, которому и посвящено настоящее диссертационное исследование.

Научная новизна диссертации выражается в том, что автор подверг всестороннему и систематическому экспертному анализу основные этапы конституционного развития РА, обосновывается необходимость внесения изменений в действующую Конституцию, обусловленную политическими, социальными, экономическими и правовыми факторами страны, также в работе раскрывается политико-правовая и идеологическая сущность Конституции как общественного союза (договора).

В работе также обсуждались современные конституционные аксиологические и концептуальные подходы, вопросы совершенствования непосредственного действия положений Конституции и правовой системы, толкования Конституции, улучшения законодательства и правоприменительной практики. Элементы научной новизны также содержатся в основных положениях защиты, практических рекомендациях и теоретических выводах, которые имеют как научно-познавательное, так и практико-прикладное значение.

Конституция РА – единый нормативный правовой акт, наделенный высшей юридической силой, который в соответствии с волей армянского народа (нации) регулирует наиболее существенные, коренные, решающие отношения, разворачивающиеся во всех сферах общественной жизни, официально провозглашает и юридически закрепляет естественные и неотъемлемые права и свободы, принадлежащие человеку и народу, а также устанавливает правовые механизмы их реализации (осуществления).

Конституция как основополагающий нормативно-правовой документ, регулирующий сосуществование общества, является гарантией обеспечения стабильного и динамичного развития и территориальной целостности страны в правовом плане.

Теоретическая значимость исследования выражается в том, что автор характеризует сущность и существенные особенности Конституции РА с новых концептуальных позиций, которые в определенной степени развивают теоретические представления о Конституции в целом и могут стать основой для дальнейших разработок.

Практическая значимость исследования заключается в том, что положения, выводы и аргументы, сформулированные в работе, могут быть использованы в процессе конституционных изменений и обучения.

Summary

Shahnazaryan Norik (patronymic Edik)

Modern conceptual approaches, legal peculiarities and development trends of the RA Constitution

Modern scientific researches emphasize the justified interest to the issue of the Constitution. The Constitution becomes a necessary precondition in the process of establishing the rule of law. The doctrine of the Constitution as a systematized concept was formed in the epoch of bourgeois-democratic revolutions (XVII-XVIII centuries).

The constitution of the modern period is characterized by the assertion of the fundamental principle of the supremacy of the Constitution in the national legal system.

The most general characteristic of constitutional developments is that nowadays, more than ever, the importance of a reliable guarantee of the application of constitutional principles and norms in social relations, constitutionalization of these relations as a prerequisite for the establishment of legal, democratic systems and principles is given.

This initial principle is especially important for the legal system of the newly independent states formed in the modern era, including the Republic of Armenia. In our country, the constitutional amendments were mainly of fragmentary and unsystematized methodological nature, which left many unresolved problems in the direction of effective protection of human rights, separation of powers, improvement of the judicial system.

Of course, there has never been and cannot be an absolutely flawless and perfect constitution or law at all times. This is explained not only by subjective reasons (the Constitution is the result of compromise in the struggle of certain political forces, which also puts its stamp on the level of legal consciousness and legal culture of constitutionalists, etc.), but also by objective factors (objective laws of social development, challenges of time, etc.).

The Constitution amended in 2015 more clearly defined the principle of separation of powers, strengthened the system of guarantees of human and civil rights and freedoms, reformed the system of judicial bodies, in particular, additional guarantees were established to establish an independent judiciary and increase the authority of judicial acts, expanded the competence of the system of local self-government, etc. However, the process of constitutional reforms was not limited to this. Moreover, years after the 2015 amendments, it became clear that the current Constitution needs further systemic changes.

Consequently, a number of issues of constitutional-theoretical and practical nature need serious scientific research, to which the present dissertation research is

devoted. The scientific novelty of the dissertation is expressed in the fact that the author subjected to a comprehensive and systematic expert analysis the main stages of the constitutional development of the Republic of Armenia, substantiates the necessity of making changes to the current Constitution due to the political, social, economic and legal factors of the country, also the work reveals the political-legal and ideological essence of the Constitution as a social union (contract).

The work also discussed modern constitutional axiological and conceptual approaches, the issues of improving the direct action of the provisions of the Constitution and the legal system, interpretation of the Constitution, improvement of legislation and law enforcement practice. The elements of scientific novelty are also contained in the main provisions of the defense, practical recommendations and theoretical conclusions, which have both scientific-cognitive and practical-applied significance.

The Constitution of the Republic of Armenia is a single normative legal act endowed with supreme legal force, which in accordance with the will of the Armenian people (nation) regulates the most essential, fundamental, decisive relations unfolding in all spheres of public life, officially proclaims and legally enshrines the natural and inalienable rights and freedoms belonging to man and the people, as well as establishes legal mechanisms for their realization (implementation).

The Constitution as a fundamental normative-legal document regulating the coexistence of society is a guarantee of ensuring stable and dynamic development and territorial integrity of the country in legal terms.

The theoretical significance of the research is expressed in the fact that the author characterizes the essence and essential features of the RA Constitution from new conceptual positions, which to a certain extent develop theoretical ideas about the Constitution as a whole and can become the basis for further developments.

The practical significance of the study lies in the fact that the provisions, conclusions and arguments formulated in the work can be used in the process of constitutional amendments and training.